ԶԱՔԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻԼԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆՈՒՄ

Արտաշէս Շահնազարեան

Հիւսիսարեւելեան կամ, ինչպէս ընդունուած է հայ պատմագիտութեան մէջ, Զաքարեան Հայաստանը մոնղոլական մեծ խան Մանգուի (1251-1259) եղբայր Հուլաւուի կողմից 1256 թ. ստեղծուած մոնղոլական մի նոր պետութեան՝ Իլխանութեան երկրորդ շրջանում եւս, որը ներառում է 1270-ական թուականների սկզբից մինչեւ Ղազան խանի մահը (1304) ընկած ժամանակահատուածը, Արեւելեան Վրաստանի հետ ներառուած էր Գիւրջիստանի վիլայէթի մէջ: Հինգ ռազմավարական միաւորներից՝ թումաններից, բաղկացած Զաքարեան Հայաստանում սկզբում գերիշխում էին Զաքարեան իշխանական տան ներկայացուցիչները, որոնց անմիջական գերական էին վրաց Բագրատունիները: Սակայն աւատատիրական յարաբերութիւնների խորացմամբ եւ մոնղոլ նուաճողների վարած՝ ուժերի անկայուն հաւասարակշռութեան պահպանման քաղաքականութեամբ պայմանաւորուած՝ Զաքարեանների դիրքերն աստիճանաբար սասանւում էին: Այդ երբեմնի հզօր տոհմի կրտսեր ճիւղեր Վահրամեաններն ու Թմոգուեցիները ԺԳ. դ. վերջին քառորդում փաստօրէն հեռացան պատմական ասպարէզից, իսկ աւագ ճիւղերը՝ Աւագեանները եւ, յատկապէս, Շահնշահեանները, տնտեսապէս քայքայուելով, խիստ թուլացել էին: Նախկին դիրքերը եթէ ոչ ամրապնդելու, ապա գոնէ պահպանելու համար նրանք ստիպուած էին յամառ պայքար մղել մոնղոլների նպատակադիր բարեհաճութեամբ վերելք ապրող իրենց նախկին ստորականեր Օրբէլեանների ու Մահկանաբերդցիների դէմ, որոնք իրենց հերթին քաղաքական գերակայութեան համար մրցում էին միմեանց հետ: Աւելին, արու ժառանգորդից զուրկ «Աւագեան տան» տիրոյթների նկատմամբ «Շահնշահեան տան» յաւակնութիւնների պատճառով հարթ չէին նաեւ նրանց յարաբերութիւնները:

Այս պայքարում 1270-ական թուականների սկզբներին յաջողութիւնն ուղեկցում էր երկրորդ եւ վերջին վերելք ապրող Մահկանաբերդցիներին: ԺԴ. դարի վրաց Անանուն ժամանակագիրը նշում է, որ Հուլաւուի կողմից մեծարուած Սադունին Մահկանաբերդցուն Աբաղա իլխանը (1265-1282) պատուով էր վերաբերւում, իսկ Իլխանութեան առաջին (մեծ) վէզիր, Փինանսական դիւանի ղեկավար ամենազօր Շամս ադ դին Մուհամմադ Ջուվէյնին՝ աթաբեկ Աւագի դուստր Խոշաքի ամուսինը, բարութեամբ՝ վերջին հանգամանքը պայմանաւորելով Մահկանաբերդի տիրոջ՝ Խոշաքի սենեկապետը լինելով[1]: Իրականում այդ երկու հաշուենկատ, ընչաքաղց ու խորամանկ անձնաւորութիւնների՝ Սահիբ դիւան Մուհամմեդ Ջուվէյնու եւ Սադուն Մահկանաբերդցու սերտ յարաբերութիւնների հիմքում ընկած էր շահերի ընդհանրութիւնը:

Սադուն Մահկանաբերդցին պէտք է իր համար բարենպաստ պայմաններն առաւելագոյնս օգտագործէր՝ հնարաւորինս արագօրէն տնտեսապէս հզօրանալու եւ դիրքերն աւելի ամրապնդելու համար: Նրան նախ շնորհումներ կատարեց Արեւելեան Վրաստանի թագաւոր Ուլու Դաւիթը (1246-1271)[2]: Սակայն Սադունը դրանով

1 Տե՛ս *Картлис цховреба*, Тбилиси, 2008, с. 375.

2 Տե՛ս նոյն տեղում:

չբաւարարուեց: Հասնելով Ուլու Դաւթին Շահնշահի որդի Իւանէ մանդատուրթ-ուխուցեսի գործուն մասնակցութեամբ յաջորդած[3] 12-ամեայ Դեմետրէ Բ.-ի խնամակալ նշանակուելուն՝ նա 1272 թ. դարձաւ արեւելավրացական թագաւորութեան ոչ միայն աթաբեկ, այլեւ ամիրսպասալար՝ այդ պաշտօնները խլելով Իւանէ Աբուլեթիսաձէից[4]: Վերջինս ոչ միայն զրկուեց պաշտօններից, այլեւ կեանքը փրկելու համար եղբօր հետ ապաստանեց Իկոնիայի սելջուկեան սուլթանութիւնում: Այսպիսով, օգտուելով Դեմետրէ Բ.-ի անչափահասութիւնից ու Իլխանութեան առաջին դէմքերի հետ ունեցած սերտ կապերից, Սադուն Մահկանաբերդցին դարձաւ Գիւրջիստանի վիլայէթի հայ-վրացական աւագանու մէջ առաջին դէմքը: Ինչպէս վկայում է ԺԴ. դարի վրաց Անանուն ժամանակագիրը՝ «Այս ընթացքում Սադուն Մահկանաբերդցին իր ժամանակի մթաւրերից առաւել բարձր դիրքի հասաւ» եւ Աբաղան «նրա ձեռքը յանձնեց Վրաստանի գործերը ու զօրքերի կառավարումը»[5]: Շահարկելով ազդեցիկ դիրքն ու պաշտօնները՝ նա իր կամակատարի վերածուած վրաց արքային նոյն 1272 թ. ստիպեց իրեն շնորհել Թելաւն ու Բելաքանը, իսկ 1273-ին՝ Կարսը, ինչպէս նաեւ՝ Աբուլեթիսաձէներին պատկանող Դմանիսն իր շրջակայքով ու այլ տիրոյթներ[6]: Բացի այդ, նա Կարսին տիրանալուց յետոյ Ախալցիխելիներից խորամանկութեամբ խլեց յարակից սահմանագլխային հողերը[7]:

Սադուն Մահկանաբերդցու հետ մրցակցութիւնում պարտուած Օրբէլեան իշխանատոհմի գահերէց Սմբատ Օրբէլեանը 1273 թ. Թաւրիզում, որտեղ պետական ծառայութեան մէջ էր, վախճանուեց: Անժառանգ Սմբատին փոխարինեց նրան որակական յատկանիշներով չզիջող կրտսեր եղբայրը՝ Տարսայիճը: Վերջինիս իշխանութեան գալը ոչ պատահաբար զուգադիպեց Օրբէլեան-Խաղբակեան ներհակութիւնների նոր դրսեւորմանը, քանի որ Սմբատ Օրբէլեանը շարունակում էր Հասան-Պռոշ Խաղբակեանին պատկանող տիրոյթների իւրացումը: Դրա օրինակներից է Արատէսի վանքն իր շրջակայքով Խաղբակեաններից Օրբէլեաններին անցած լինելը[8]: Օգտուելով Օրբէլեանների դիրքերի սասանումից՝ Հասան-Պռոշ Խաղբակեանը փորձեց նրանց հոգեւոր տեսչութեանը ենթակայ իր տիրոյթների համար առանձին հոգեւոր թեմ ստեղծել: Սակայն Տարսայիճին յաջողուեց Յակոբ Ա. Կլայեցի կաթողիկոսի (1268-1286) միջոցով Հասան-Պռոշի այդ մտայղացումը ձախողել[9]:

1275 թ. սկզբներին բասղաղ Արղունը Գիւրջիստանի վիլայէթում նոր աշխարհագիր անցկացրեց[10]: Հայկական սկզբնաղ-

3 Տե՛ս նոյն տեղում, էջ 381:

4 Տե՛ս **Պ. Մ. Մուրադեան**, *Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները*, Երեւան, 1977, էջ 229-236:

5 *Картлис цховреба*, с. 381.

6 Մանրամասն տե՛ս **Հ. Մարգարեան**, *Մահկանաբերդցիների (Սադունեանների) իշխանական տունը ԺԲ.-ԺԴ. դարերում*,- «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 1998, հտ. ԺԸ, էջ 23-25, հմմտ. **Რ.ჯიკნაძე**, *საქართველოს ისტორიის წყაროთმცოდნეობის საკითხები*, ტ. I, თბილისი, 1982, გვ. 171-173

7 *Картлис цховреба*, с. 382.

8 *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ III, Վայոց ձորի, Եղեգնաձորի եւ Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, 1967, էջ 124:

9 Տե՛ս **Ստեփանոս Օրբէլեան**, էջ 364-366:

10 Ռ. Կիկնաձէն, յենուելով Ա. Գալստեանի կողմից Ստեփանոս եպիսկոպոսի «Տարեգրութեան» ռուսերէն թարգմանութեան վրայ, որտեղ տարեթիւը սխալմամբ 1275 է նշուել (*Армянские источники о монголах, извлечение из рукописей XIII-XIV вв.*, перевод с древнеармянского, предисловие и примечания А. Г. Галстян, Москва, 1963, с. 36), այս աշխարհագիրը թուագրել է այդ տարով (**Р. К. Кикнадзе**, *Очерки по источниковедению истории Грузии*, Пареадан Горгиджанидзе и «Картлис цховреба», Тбилиси, 1980, с. 154). Իրակա-

© National Library of Armenia

բիւրները բաւարարուել են այդ իրադարձութեան հակիրճ արձանագրմամբ[11], իսկ ԺԴ. դարի վրաց Անանուն ժամանակագիրը նաեւ փաստել է, որ Արղունը գոյքագրել է վիլայէթի գաւառները, նաեւ՝ ճշտելու, թէ նախորդ աշխարհագրից յետոյ դրանք որքանով են վերականգնուել կամ աւերուել[12]: Պարզուել էր, որ գաւառների մեծ մասը տնտեսապէս քայքայուել է: Դա Իլխանութիւնում կիրառուող հարկային հիւծիչ քաղաքականութեան եւ մոնղոլական ընչաքաղց պաշտօնէութեան չարաշահումների արդասիքն էր: Հայ իշխանական տներից շատերը, տնտեսական գործունէութեան անշահաւէտութեամբ պայմանաւորուած, հարկային ծանր բեռի տակ կքելով, ստիպուած ենչին գներով իրենց ունեցուածքը վաճառում էին տուեալ պահին մոնղոլների բարձրացրած որեւէ ժամիշխանի կամ էլ առեւտրավաշխառուական գործառնութիւններով արագօրէն հարստացած մէկին: Այսպէս օրինակ՝ Սադուն Մահկանաբերդցին, Ուլու Դաւթից եւ Դեմետրէ Բ.-ից ստացած տիրոյթներով չբաւարարուելով, «գնեց բազմաթիւ հողեր»[13], իսկ Ուքանեանները 1271 թ. ձեռք էին բերել նաեւ Շահնշահեան տանը պատկանող՝ Անիի մօտ գտնուող Կարմիր վանքը՝ «իւր ամենայն սահմանաւք հողով եւ ջրով»[14] եւ այլն:

Հայ իշխանական տների տնտեսական քայքայման ու տիրոյթազրկման գործընթացը շարունակուեց նաեւ յետագայում: Դա է վկայում, օրինակ, Նոր Գետիկում (Գօշավանք) Ումեկի որդի Ճարի թողած 1283 թուականի արձանագրութիւնը: Դրանում Ճարը յայտնում է, որ իր հայրը Նոր Գետիկը գնել է քառասուն հազար կարմիր դուկատով, իսկ ինքը «ի դառն ժամանակի, որ հայրենիքն արժան էր, եւ ոսկին թանգ», Հովքը «իւր ամէն սահմանաւքն» ձեռք է բերել հազարով[15]: Սրանից հետեւում է, որ «Ումեկի ժամանակ, 13-րդ դարի երկրորդ քառորդում անշարժ գոյքը աւելի թանկ էր, եւ ոսկին անհամեմատ աւելի էժան էր, քան նրա որդու՝ Ճարի ժամանակ՝ 13-րդ դարի ութսունական թուականներին»[16]: Ուշագրաւ է, որ Հովքի դէպքում իր շրջակայքով առքուվաճառքի առարկայ է դարձել Աւագեան տան տիրոյթ հանդիսացող մի բնակավայր, որը գտնուում էր ռազմավարական եւ առեւտրական առումով խիստ կարեւոր ճանապարհի վրայ ընկած Կայեան գաւառում: Հետեւաբար՝ Խոշաքի հետ ամուսնանալու հետեւանքով փաստացի Սահիբ դիւան Մուհամմեդ Ջուվէյնուն անցնելուց յետոյ էլ «Աւագեան տան» տիրոյթների տնտեսական քայքայումը ոչ միայն չդադարեց, այլեւ՝ աւելի խորացաւ: Եւ քանի որ Կայեանից ստացուող եկամուտները հեռու էին գանձուող հարկերը ծածկելուց անգամ, Խոշաքը ստիպուած էր, մօր օրինակին հետեւելով, մաս առ մաս օտարել, թւում էր, թէ եկամտաբեր այդ գաւառը:

Հին իշխանական տների կալուածքների որոշ մասն առեւտրավաշխառուական խաւի խոշոր ներկայացուցիչներին անցնելը յանգեցնում էր նրանցով հայ միջին խաւի աւատատէրերի համալրմանը: Օրինակ՝ դեռ նախքան Հովքին տիրանալն էլ, 1273 թ. Նոր Գետիկում գրչագրուած մի ձեռագրի յիշատակարանում Կայեան գաւառում Ումեկեանների կալուածքները բնորոշուած են «իշխանութեանը» հոմանիշ «տէրութիւն» եզրոյթով՝ «տէրութեան տեղոյս Ճարին»[17]:

Իկոնիայի սելջուկեան սուլթանութեան վէզիր Մուին ադ դին Փերուանէի սադրանքով 1276 թ. յուլիսի 3-ին մոնղոլական պահակային զօրքերին Ալբիստանում ջախջախած Եգիպտոսի մամլուքեան սուլթան Ռուքն ադ դին Բէյբարս Ա.-ին (1260-1277) եւ տեղի մամլուքամէտ ուժերին պատժելու նպատակով Աբաղա իլխանը նոյն թուականի յուլիսի վերջերին արշաւեց Իկոնիայի սելջուկեան սուլթանութիւն՝ աւերելով Նիկիտէ ու Խարբերդ քաղաքներն իրենց շրջակայքով: Սակայն Աբաղան չհասցրեց Բէյբարսին պատժել: Լուր առնելով, որ Ոսկէ Յորդայի խան Բերքէի զօրքերը մօտ են, Դերբենտն անցնելով, Իլխանութեան տարածք ներխուժելուն՝ նա ստիպուած շտապ յետ դարձաւ[18]:

Աբաղան, պարտադրուած լինելով կռուել երկու ճակատով, Եգիպտոսի մամլուքեան սուլթանութեան դէմ (որտեղ արդէն իշխում էր Մանսուր Սէյֆ ադ դին Կալաուն սուլթանը (1280-1290)), կարողացաւ բանակ ուղարկել միայն 1281-ին: Իլխանի եղբայր Մանգու Թիմուրի գլխաւորած միացեալ բանակի կազմում, ի թիւս այլ զօրքերի, ընդգրկուած էին նաեւ Կիլիկիայի հայկական թագաւորութեան զօրամասերը Լեւոն Բ.-ի (1270-1289) եւ Գիւրջիստանի վիլայէթի հայ-վրացական զօրաջոկատները՝ Դեմետրէ Բ.-ի գլխաւորութեամբ (թուով շուրջ 27 հազար): Ճակատամարտը կայացաւ նոյն թուականի հոկտեմբերի 30-ին Հիմս (Հոմս) քաղաքի մօտ: Չնայած հայ-վրացական ուժերի յաջող գործողութիւններին՝ Մանգու Թիմուրի թոյլ ղեկավարութեան պատճառով մոնղոլական միացեալ բանակը պարտուեց եւ մեծ կորուստներով, որոնցից զերծ չմնացին նաեւ հայ-վրացական ուժերը, նահանջեց[19]: Այս ճակատամարտին մասնակցած հայ իշխաններից սկզբնաղբիւրներում յանուանէ յիշատակուած է միայն Տարսայիճ Օրբէլեանը[20]: Սակայն անվիճելի է, որ նա միակը չէր:

Աբաղան պատրաստւում էր Եգիպտոսի մամլուքեան սուլթանութեան դէմ նոր արշաւանքի, սակայն 1282 թ. ապրիլի 1-ին Համադանում յանկարծամահ եղաւ[21]: Հակառակ Ռաշիդ ադ Դինի, որն իլխանի մահուան մէջ որեւէ մէկի չի մեղադրում, Ստեփանոս Օրբէլեանն այն «ի դաւելոյ ոմանց» հետեւանք է համարում, իսկ Անանուն Սեբաստացին՝ Սահիբ դիւան Մուհամեդ Ջուվէյնու կողմից թունաւորուելու[22]: Հայկական սկզբնաղբիւրների վկայութիւնները, դատելով իրադարձութիւնների յետագայ զարգացումից, անհաւանական չեն թւում: Աբաղային պէտք է յաջորդէր նրա որդիներից իլխանական

նում Ստեփանոս եպիսկոպոսն այդ իրադարձութիւնը թուագրել է 1275-ով՝ ՌՄՀԷ (*Մանր ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ.*, հտ. I, կազմեց Վ. Ա. Ցակոբեանը, Երեւան, 1951, էջ 44):

11 Տե՛ս *Մանր ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ.*, հտ. I, էջ 44. **Մխիթարայ Այրիվանեցւոյ** *Պատմութիւն Հայոց*, Մոսկուա, 1860, էջ 68:

12 *Картлис цховреба*, с. 383.

13 Նոյն տեղում, էջ 382:

14 **Գ. Ցովսէփեան**, *Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի պատմութեան*, հտ. Ա, Երեւան, 1983, էջ 232:

15 *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ VI, կազմեցին, Ս. Ա. Աւագեանը, Հ. Մ. Ջանփոլադեանը, Երեւան, 1977, էջ 71:

16 **Ց. Մանանդեան**, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան*, հտ. Գ, Երեւան, 1952, էջ 265:

17 *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար*, կազմեց Ա. Ս. Մաթեւոսեանը, Երեւան, 1984, էջ 435:

18 *Մանր ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ.*, հտ. I, էջ 44, 45, 61, ծան. 86, հտ. II, կազմեց Վ. Ա. Ցակոբեանը, Երեւան, 1956, էջ 147. **Рашид ад-Дин**, *Сборник летописей*, т. III, М.-Л., 1946, с. 88:

19 Մանրամասն տե՛ս **А. Г. Маргарян**, *Об участии армян и грузин в Хамской битве 1281 года*,- «Кавказ и Византия», вып. 5, Ереван, 1987, с. 14-21:

20 *Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց*, Թիֆլիս, 1910, էջ 423-424:

21 **Рашид ад-Дин**, т. III, с. 97.

22 **Ստեփանոս Օրբէլեան**, էջ 419. *Մանր ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ.*, հտ. II, էջ 148: Այդուհանդերձ, Ռաշիդ ադ Դինը յայտնում է, որ Սահիբ դիւան Մուհամեդ Ջուվէյնու հակառակորդներից Մաջիդ ալ Մուլքն Աբաղայի որդի Արղունին յայտնել էր, որ Սահիբ դիւանը թունաւորել է նրա հօրը (**Рашид ад-Дин**, т. III, с. 100):

© National Library of Armenia

գահի օրինական ժառանգորդ համարուող Արղունը: Սակայն Աբաղայի եղբայրներից Թագուդարին յաջողուեց նաեւ Սահիբ դիւան Մուհամեդ Ջուվէյնու եռանդուն աջակցութեամբ, դաւով եւ բռնութեամբ ուղեկցուող ապօրինութիւններով զաւթել իշխանութիւնը:

Ի դէմս Իլխանութիւնում բնակչութեան բացարձակ մեծամասնութիւն կազմող մահմեդականների՝ իր երերուն իշխանութեան համար ամուր յենարան ստեղծելու նպատակով Թագուդարը դաւանեց իսլամը՝ ընդունելով Ահմադ անունը: Հայկական սկզբնաղբիւրներում խիստ բացասական գոյներով ներկայացուած Թագուդար-Ահմադը դաժան հալածանքներ սկսեց քրիստոնեաների, այդ թւում եւ հայերի նկատմամբ: Դրա վկայութիւններից է Բերկրիի եպիսկոպոսի եւ մի քանի քահանաների սպանութիւնը: Թագուդար-Ահմադն անգամ մտադիր էր մահմեդականացնել Իլխանութեան (որը նպատակադիր սուլթանութիւն էր վերանուանել) բոլոր քրիստոնեաներին[23]:

Այս ընթացքում (1282/1283) Սադուն Մահկանաբերդցին վախճանուեց: Նրան յաջորդեց որդիներից Խութլու Բուղան՝ Ուլու Դաւթի երդուեալ թշնամի Խօջա Ազիզի թոռը: Ընդ որում՝ Խօջա Ազիզի որդի Իլ-Խութլուն իր հերթին Դեմետրէ Բ.-ի վտանգաւոր թշնամին էր, ինչը Դեմետրէ Բ.-ին ստիպելու էր, Սադունի մահից օգտուելով, անել հնարաւորը՝ թուլացնելու իր իշխանութիւնն անուանական դարձրած Մահկանաբերդցիներին: Ուստի նա Խութլու Բուղային հայրական պաշտօններից շնորհեց միայն ամիրսպասալարութիւնը, իսկ աւելի կարեւոր ու բարձր աթաբեկութեան պաշտօնը՝ ոչ[24]: Աւելին՝ մի նոր ժամիշխանի ի յայտ գալը բացառելու նպատակով նա այդ պաշտօնը ոչ ոքի չշնորհեց: Նուաստացուած Խութլու Բուղան, Դեմետրէ Բ.-ին չհնազանդուելով, ծառայութեան անցաւ իլխանական արքունիքում: Խութլու Բուղայի այս քայլին վրաց արքան հակադարձեց՝ նրա տիրոյթները յարքունիս գրաւելով[25]: Նոր ծառայատեղում Խութլու Բուղան խարդաւանքներով հասաւ նրան, որ իր վտանգաւոր հակառակորդ Աբուլեթիսձէ եղբայրները մահապատժի ենթարկուեն[26]:

Արղունը հայրական գահին հաստատուելու համար 1284 թ. սկզբներին Խորասանում պայքար սկսեց հօրեղբօր դէմ, սակայն պարտուեց ու բանտարկուեց: Նրա ընդվզումը ճնշելիս Թագուդար-Ահմադին օգնեցին նաեւ Դեմետրէ Բ.-ն, Իւանէ մանդատուրթ-ուխուցեսը եւ Խութլու-Բուղան[27]: Սակայն, վերջինս, չնայած իլխանին օգնած լինելուն, նրա կողմից բանտարկուեց (անկասկած, Դեմետրէ Բ.-ի ջանքերով) եւ ազատուեց վերջինիս հաւատարմութեան երդում տալուց յետոյ միայն: Դրանից յետոյ նա յետ ստացաւ իր տիրոյթները[28]: Թագուդար-Ահմադին վիճակուած չէր երկար իշխել: Մոնղոլական

23 *Մանր ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ.*, հտ. I, էջ 45-46. **Ստեփանոս Օրբէլեան**, էջ 425. *Հեթում պատմիչ Թաթարաց* յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն Հ. Մկրտիչ աթոռակալ վարդապետի Աւգերեան, Վենետիկ, 1842, էջ 57:

24 Տե՛ս *Картлис цховреба*, с. 386.

25 Տե՛ս **Ռ. Յօշեանց**, նշ. աշխ., հտ. 1, էջ 184:

26 Տե՛ս *Картлис цховреба*, с. 387.

27 Տե՛ս նոյն տեղում: Ռաշիդ ադ Դինն այս իրադարձութիւններին անդրադառնալիս նշում է, որ Արղունի դէմ Թագուդար-Ահմադի հանած 100-հազարանոց ընտիր հեծեալ զօրքի կազմում կային նաեւ հայեր ու վրացիներ (**Рашид ад-Дин**, т. III, с. 104): Ապա նշում է, որ ճանապարհին՝ մինչեւ Խորասան հասնելը, Ռազուինի սահմաններից սկսած այդ զօրքը սկսեց բնակչութեան կողոպուտն ու կոտորածը, շեշտելով դրանցում հայ-վրացական զօրաջոկատի աչքի ընկնելը (նոյն տեղում, էջ 106): Հետեւաբար՝ հայ-վրացական զօրաջոկատին հետաքրքրում էր ոչ թէ յանուն Թագուդար-Ահմադի կեանքը վտանգելը, այլ՝ ռազմաւար ձեռք բերելը:

28 Տե՛ս **Ռ. Յօշեանց**, նշ. աշխ., հտ. 1, էջ 184:

վերնախաւի մի խմբաւորում՝ էմիր Բուղայի գլխաւորութեամբ, 1284 թ. օգոստոսին նրան գահազրկելով, իլխան հռչակեց Արղունին (1284-1291), որը Գիւրջիստանի վիլայէթի տնօրինութիւնը յանձնեց իր հօրեղբայր Աջային[29]:

Այս իրադարձութիւնների ժամանակ Դեմետրէ Բ.-ն, ակնյայտօրէն, իր դստեր սկեսրայր Բուղայի խորհրդով հեռացաւ Թագուդար-Ահմադից եւ յարեց Արղունին: Նոր իլխանը դաժան հաշուեյարդար տեսաւ հօրեղբօր կողմնակիցների, այդ թւում՝ Սահիբ դիւան Մուհամեդ Ջուվէյնու հետ, որը 1284 թ. հոկտեմբերի 16-ին մահապատժի ենթարկուեց: Նա գրաւոր խնդրել էր, որ իր մահուանից յետոյ Խոշաքին ու նրանից ունեցած Աթաբէկ որդուն թոյլ տրուի ցանկութեան դէպքում Պարսկաստանից վերադառնալ հայրենիք, այսինքն՝ Աւագեան տան տիրոյթներ: Խոշաքից ունեցած աւագ որդի Զաքարէին, ըստ ամենայնի, կտակել էր Շահնշահեան տնից գնած կալուածքները՝ նրան յանձնելով Բուղայի հոգածութեանը[30]: Խոշաքին ու Աթաբէկին թոյլատրուեց վերադառնալ հայրենիք: Բուղայի խորհրդով Արղունը նոյն թուականին ոչ միայն վերահաստատեց գահին տիրելուն իրեն որեւէ գործնական ծառայութիւն չմատուցած Դեմետրէ Բ.-ի իրաւունքներն ու նրան շնորհեց «իր ամբողջ թագաւորութիւնը», այլեւ՝ «աթաբեկ Աւագի տունը»[31]: Այսպիսով, Խոշաքի հայրական տիրոյթները, որոնք Ուլու Դաւթի ու Խոշաքի մայր Գոնցայի ամուսնանալուց յետոյ մացուել էին վրաց արքունապատկան տիրոյթների մէջ, բայց Սահիբ դիւան Մուհամմեդ Ջուվէյնու եւ Խոշաքի ամուսնութեամբ հանուել դրանցից, կրկին արքունապատկան դարձուեցին: Դրա համար իրաւական հիմք կարող էին ծառայեցուել ինչպէս առաջին հանգամանքը, այնպէս էլ այն իրողութիւնը, որ Դեմետրէ Բ.-ի մայր Գոնցան էր Աւագի մահից յետոյ նախքան Ուլու Դաւթի կինը դառնալը տնօրինում «Աւագեան տան» տիրոյթները[32]:

Ստեփանոս Օրբէլեանն իր հերթին յայտնում է, որ Արղունը Դեմետրէ Բ.-ին էր յանձնել «զամենայն աշխարհս Հայոց՝ զտունն Աւագեան եւ զտունն Շահնշահեան եւ զգագեցին եւ զորդիսն Սադուն աթաբեկին»[33]: Նա նաեւ յաւելում է, որ վրաց արքան իր հերթին, Շարուրում թանկարժէք ընծաներով իրեն դիմաւորած Տարսայիճ Օրբէլեանին Այրարատ՝ «Աւագեան տուն» տանելով, «եդ Աթաբէկ ի վերայ ամենայն տէրութեան իւրոյ մինչեւ ի Տփխիս եւ յԱնի եւ ի Կարս: Եւ եդ ի ձեռս նորա զտղայսն իւր զԴաւիթ եւ զՄանուէլն սնուցեալ զնոսա եւ պահեալ»[34]: Սակայն Սիւնեաց պատմիչի վկայութիւնը մասամբ է իրապատում, քանզի Դեմետրէ Բ.-ն Դաւիթ արքայորդու խնամակալ՝ աթաբեկ էր նշանակել Խութլու Բուղային, ինչը երեւում է Աւանի կաթողիկէ եկեղեցու 1285 եւ 1287 թուակիր երկու արձանագրութիւններից[35]: Հետեւաբար՝ վրաց արքան, Տարսայիճ Օրբէլեանին աթաբեկ նշանակելով հանդերձ, այդ գործակալութեան գործառոյթները երկատել էր, որպէսզի նա եւ Խութլու Բուղան միմեանց հակակշռեն[36]: Վերջինս էլ, Սահիբ դիւան Մուհամեդ Ջուվէյնու պէս հզօր հովանաւորից զրկուած լինելով, ստիպուած համակերպուել էր իր նոր կարգավիճակի

29 Տե՛ս **Рашид ад-Дин**, т. III, с. 114.

30 Տե՛ս նոյն տեղում, էջ 115-116:

31 Տե՛ս *Картлис цховреба*, с. 388.

32 Տե՛ս **Ստեփանոս Օրբէլեան**, էջ 412. *Մանր ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ.*, հտ. I, էջ 42:

33 **Ստեփանոս Օրբէլեան**, էջ 426:

34 Նոյն տեղում:

35 Տե՛ս **Կ. Ղաֆադարեան**, *Երեւան. Միջնադարեան յուշարձանները եւ վիմական արձանագրութիւնները*, Երեւան, 1975, էջ 195:

36 Հմմտ. **Հ. Մարգարեան**, *Մահկանաբերդցիների (Սադունեանների) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դարերում*, էջ 26-27:

© National Library of Armenia

հետ: Այսպիսով, վրաց Բագրատուններ-Մահկանաբերդցիներ հակամարտութեան եւ Օրբէլեաններ-Մահկանաբերդցիներ մրցակցութեան այս փուլն աւարտուեց Խութլու Բուղայի պարտութեամբ:

Այս նոյն 1284-ին վախճանուեց Խաղբակեան իշխանական տան գահերէց Հասան-Պռոշը[37]: Նրան յաջորդեց կենդանի մնացած որդիներից աւագը՝ Պապաքը, որը հօր կենդանութեան վերջին շրջանում նրան օգնում էր վարելու իշխանութիւնը: Որոշ ժամանակ անց՝ 1287-ի ցրտաշունչ ձմռանը, վախճանուեցին նաեւ Ներքին Խաչէնի իշխան Իւան Աթաբեկը եւ Վերին Խաչէնի (Ծարի) իշխան Հասանը[38]: Նրանց յաջորդեցին որդիները՝ համապատասխանաբար՝ Ջալալն ու Գրիգորը:

Քրիստոնէութեան ու այն դաւանողների նկատմամբ մեղմ վերաբերմունքի շնորհիւ հայկական սկզբնաղբիւրների կողմից դրական գնահատուած Արղունի գահակալութեան առաջին տարիները խաղաղ անցան: Նրան 1285 թ. այցելեց Կիլիկիայի Հայոց թագաւոր Լեւոն Բ.-ն[39]: Ընդունած վերջինիս առաքելութեան նպատակի մասին հայկական սկզբնաղբիւրները լռում են, փաստ է, որ նա փորձում էր Եգիպտոսի մամլուքեան սուլթանութեան դէմ պայքարում ստանալ իլխանի աջակցութիւնը: Արղունն իր հերթին մամլուքների դէմ ընդհանուր ճակատ կազմելու միտումով 1288 թ. Հռոմի պապ Նիկողայոս Դ.-ի մօտ իբրեւ բանագնացներ ուղարկեց նեստորականութիւն դաւանող Ոյդուր վանական Բարսումային եւ Շահաբադինին[40]: Սակայն այս առաքելութիւնն ապարդիւն անցաւ:

Տարսայիճ Օրբէլեանն աթաբեկ դառնալուց յետոյ ոչ միայն «բազում դիւրութիւն եւ ողորմութիւն առնէր նեղեալ Հայոց»[41], այլեւ ապահարկ դարձրեց հայոց աւելի քան 150 վանք[42]: Եթէ Սիւնեաց իշխանի դիրքերն ամուր էին, ապա Խութլու Բուղայինը թուլանում էին: Դեմետրէ Բ.-ն Իլխանութեան գլխաւոր էմիր, այսինքն՝ փաստական կառավարիչ դարձած Բուղայի միջոցով հասաւ նրան, որ իլխանական արքունիքում գտնուող Խութլու Բուղան բանտարկուեց եւ ուղարկուեց Վրաստան: Այնտեղ նա վրաց արքայի ներողամտութիւնը հայցեց, ինչին արժանացաւ Դմանիսը նրան զիջելու գնով[43]: Սակայն շուտով Խութլու Բուղան, հաշուենկատ քայլերով ու իրադարձութիւնների ընթացքն իր օգտին ծառայեցնելով, յետ բերեց ոչ միայն կորցրածը, այլեւ ունեցաւ աւելին: Նա, ճիշտ հաշուարկ կատարելով, փեսայացաւ Սամցխէի ազդեցիկ իշխան Բեքա Ջաղելուն եւ, օգտուելով Բուղայի դիրքերի թուլացումից, աներոջ օգնութեամբ 1288-ի վերջերին վերադարձրեց ոչ միայն Դմանիսն ու Թելաւը, այլեւ ստացաւ Դեմետրէ Բ.-ից խլուած «Աւագեան տան» տիրոյթները[44]: Իսկ երբ Արղունի դէմ դաւադրութիւն կազմակերպած Բուղան 1289 թ. յունուարին սպանուեց, հետեւեց նրա մտերիմների, այդ թւում՝ Դեմետրէ Բ.-ի մահապատիժը (1289 թ. մարտ): Ընդ որում՝ վրաց արքայի վախճանում դեր

37 Տե՛ս Գ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ*, Անթիլիաս, 1969, էջ 70-71:

38 Տե՛ս *Մանր ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ.*, հտ. I, էջ 48:

39 Տե՛ս *Մանր ժամանակագրութիւններ*, հտ. II, էջ 148. *Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց*, Վաղարշապատ, 1893, էջ 242:

40 Տե՛ս **Ա. Յովհաննիսեան**, *Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան*, գիրք առաջին, Երեւան 1957, էջ 220:

41 **Ստեփանոս Օրբէլեան**, էջ 426:

42 Տե՛ս նոյն տեղում, էջ 427:

43 Տե՛ս **Р. К. Кикнадзе**, *Очерки по источниковедению истории Грузии, Пасадан Горгиджанидзе и "Картлис цховреба"*, с. 98.

44 Տե՛ս նոյն տեղում, էջ 98-99:

խաղացին ինչպէս Խութլու Բուղան, այնպէս էլ իր քեռի Իլ-Խութլուն[45]: Տեսնելով, որ Դեմետրէ Բ.-ի մահապատժի հարցում Արղունը երկմտում է, Խութլու Բուղան նրան խորհուրդ տուեց չվարանել եւ փոխարէնը գահ բարձրացնել Արեւմտեան Վրաստանի թագաւոր Դաւիթ Նարինի որդի Վախթանգին՝ պատճառաբանելով, որ դրա շնորհիւ վրացական երկու թագաւորութիւններն էլ կը միաւորուեն ու կենթարկուեն իլխանին: Շուտով Խութլու Բուղայի ջանքերով Արեւելեան Վրաստանում գահ բարձրացաւ Վախթանգը եւ, իբրեւ երախտագիտութեան նշան, 1289/1290 թ.՝ աթաբեկ Տարսայիճ Օրբէլեանի վախճանուելուց յետոյ, նրան շնորհեց կրկին միասնական դարձուած աթաբեկի պաշտօնը, ինչպէս նաեւ՝ ամիրսպասալարութիւնը՝ յանձնարարելով կառավարել թագաւորութիւնը[46]:

Այսպիսով՝ Օրբէլեանները ոչ միայն զրկուեցին աթաբեկութեան պաշտօնից, այլեւ Տարսայիճի վախճանուելուց յետոյ այդ տոհմի գահերէցութեան ու տիրոյթների պատկանելութեան շուրջ նրա որդիներ Էլիկումի ու Ջալալի եւ եղբօրորդի Լիպարիտի (Իւանէի տղայի) միջեւ սուր վէճեր ծագեցին: Յայտարարի չգալով՝ նրանք դիմեցին Արղունին, որն, Օրբէլեան իշխանատոհմի գահերէցութիւնը Տարսայիճի աւագ որդի Էլիկումին շնորհելով հանդերձ, հակառակ Սիւնեաց պատմիչի մեկնաբանութեանը, օգտուեց առիթից եւ մոնղոլական սովորութային իրաւունքը հիմք դարձնելով՝ նրան հրամայեց տոհմական տիրոյթներից բաժին հանել եղբօրն ու հօրեղբօրորդուն[47]: Այսպիսով՝ Օրբէլեանների իշխանութիւնը, աւատատիրական ներհակութիւններով պայմանաւորուած (ինչից Արղունը չյապաղեց օգտուել), տրոհուեց: Դա, բնականաբար, յանգեցնելու էր այդ զօրեղ իշխանական տան կարողութիւնների նուազմանն ու թուլացմանը:

Արղունը, որը, հայրական ժառանգութիւնից խոշաքին ու նրա երեխաներին զրկելով հանդերձ, թոյլատրել էր վերադառնալ հայրենիք, 1289 թ. օգոստոսին կարգադրեց սպանել Սահիբ դիւան Մուհամեդ Ջուվէյնու բոլոր որդիներին: Սակայն Աթաբեկն արդէն մահացել էր, իսկ Զաքարէն, մինչ այդ կամ էլ իլխանի հրամանի մասին իրազեկուելուց յետոյ Ափխազք անցած լինելով, խուսափեց մահապատժից[48]: Հայրենիք վերադառնալուց յետոյ Խոշաքն աստիճանաբար վերականգնում էր իր ժառանգական իրաւունքներն «Աւագեան տան» տիրոյթների նկատմամբ: ԺԴ. դարի վրաց Անանուն ժամանակագիրը 1289-ի սկզբի անցքերին անդրադառնալիս նշում է, որ Դեմետրէ Բ.-ն Արղունի մօտ մեկնելիս մտաւ «Աւագի դուստր Խուշաքի երկիրը», որտեղից իր հետ վերցրեց Դաւիթ որդուն[49]: Այս վկայութիւնից հետեւում է, որ կա՛մ «Աւագեան տան» տիրոյթները, Խութլու Բուղայից վերցուելով (եթէ, իրօք, նրան էին տրուել), նախքան այդ յանձնուել էին Խոշաքին (չնայած արքայորդի Դաւիթը գտնուում էր այնտեղ, հաւանաբար՝ Բջնիում), կա՛մ էլ ժամանակագիրը փաստել է դրանց նկատմամբ Աւագի դստեր օրինական իրաւունքները: Բոլոր

45 Տե՛ս նոյն տեղում, էջ 99:

46 Տարսայիճի մանը որդին՝ Ստեփանոս Օրբէլեանը եւ Ստեփանոս եպիսկոպոսը, որին ուսումնասիրողների մի մասը նոյնացնում է Սիւնեաց պատմիչի հետ, թուագրել է 1290-ով (**Ստեփանոս Օրբէլեան**, էջ 429. *Մանր ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ.*, հտ. I, էջ 50): Սակայն Տարսայիճի՝ այժմ ոչնչացուած տապանաքարի արձանագրութիւնը, որում շեշտուած է եղել նրա աթաբեկութիւնը, այն ժամանակին ընդօրինակած հետազօտողների համաձայն՝ կրել է հայոց ՉԼԸ (1289) թուականը (տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ III, էջ 236): Տե՛ս *Картлис цховреба*, с. 390-392:

47 Տե՛ս **Ստեփանոս Օրբէլեան**, էջ 430-431:

48 Տե՛ս **Рашид ад-Дин**, т. III, с. 123.

49 Տե՛ս *Картлис цховреба*, с. 390.

© National Library of Armenia

դէպքերում 1285-1291 միջակայքով թուագրուող երեք վիմագրեր ստոյգ արձանագրում են, որ Խոշաքն այդ ընթացքում աստիճանաբար կրկին տնօրինում էր հայրական կալուածքները[50]: Ընդ որում՝ դրանցից մէկում նա հանդէս է գալիս իբրեւ Պապաք Խաղբակեանի գերակայ[51]: Խաղբակեանների նկատմամբ «Աւագեան տան» գերակայութեան վերականգնումը փաստում է նաեւ Պապաքի՝ 1292 թ. վախճանուած եղբայր Ամիր Հասանի յիշատակումը որպէս «մեծ սպարապետն տանն Աւագին»[52]:

«Շահնշահեան տունը» 1260-ական թուականների սկզբներից գլխաւորող Իւանէ մանդատուրթ-ուխուցեսը մինչեւ 1280-ական թուականների կէսերը գործուն մասնակցութիւն էր ունենում ժամանակի կարեւոր ռազմաքաղաքական անցքերին: Սակայն Դեմետրէ Բ.-ի եւ Խուլթլու Բուղայի հետ 1284 թ. Թագուդար-Ահմադի դէմ Արղունի ընդվզումը ճնշելուն մասնակցելուց յետոյ նա այլեւս ասպարէզում չի երեւում: Իւանէից յետոյ «Շահնշահեան տան» գլուխ է անցնում նրա աւագ որդի Շահնշահը: Նա կնութեան էր առել Սահիբ դիւան Մուհամեդ Ջուվէյնու եւ Խոշաքի դուստր Խուանդզէին: Հետեւաբար՝ «Աւագեան տան» տիրոյթների նկատմամբ «Շահնշահեան տան» յաւակնութիւնների արդիւնքում նրանց հակասութիւնները հարթուել էին: Պնդել, որ վերջիններս բաւարարուել էին միայն Խոշաքի օժիտ բերած տիրոյթներով, ճիշտ չի լինի: Նրանք առնուազն 1280-ական թուականների վերջերին, 1290-ական թուականների սկզբներին կրկին տիրում էին Անիին իր շրջակայքով[53]:

Իւանէի որդի Շահնշահը, որը ոչ միայն «Շահնշահեան տան», այլեւ ընդհանրապէս Զաքարեան իշխանատոհմի վերջին խոշոր ներկայացուցիչն էր եւ գլխաւորում էր այն, Անիի 1291 թ. արձանագրութիւնում հանդէս է գալիս իբրեւ աթաբեկ եւ ամիրսպասալար[54]: Նա այդ առանցքային պաշտօնները վարեց մինչեւ կեանքի վերջը (1320): Հետեւաբար՝ իշխանատենչ, անյագուրդ ու անվստահելի Խուլթլու Բուղայի աննախընթաց հզօրացումը եւ նրա կողմից իր թագաւորական իրաւունքների դէմ կատարուող շարունակական ոտնձգութիւնները Վախթանգ Բ.-ին ստիպել էին լիովին պաշտօնազրկել Մահկանաբերդի իշխանին[55]: Խուլթլու Բուղայի դէմ յետագայ պայքարում ամուր դիրքեր ունենալու նպատակով Վախթանգ Բ.-ն յենարան էր դարձրել Շահնշահին՝ նրան շնորհելով աւանդաբար Զաքարեաններին պատկանած այդ պաշտօնները: Դրան մոնղոլները չէին առարկի, քանզի դա համահունչ էր նրանց շահերին ու աւանդական քաղաքականութեանը եւ, բացի այդ, Շահնշահը հօր նման հաւատարիմ էր նրանց: Ինչպէս արդէն տեսանք, Խուլթլու Բուղան զրկուել էր նաեւ «Աւագեան տան» կալուածքներից, որոնք անցել էին օրինական տէրերին:

Խուլթլու Բուղան, ինքնասէր ու ծայրայեղութիւնների մարդ լինելով, իր դիր-

50 Տե՛ս Գ. Յովսէփեան, *Զագաւանից ժողովը*,- «Շողակաթ», Էջմիածին, 1913, էջ 24. *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ III, էջ 78. **Բ. Ն. Առաքելեան, Գ. Հ. Կարախանեան**, *Գառնի*, III, Երեւան, 1962, էջ 45:

51 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ III, էջ 78:

52 *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար*, էջ 682:

53 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ I, Անի, կազմեց Յ. Օրբէլի, Երեւան 1961, էջ 22, 68:

54 Տե՛ս նոյն տեղում, էջ 68:

55 Տաւուշի մարզի Գետաշէն գիւղին մերձ Առաքելոց վանքի արձանագրութիւնը, որում Խուլթլու Բուղան յիշատակւում է իբրեւ «աթաբակ եւ ամիրսպասալար», իրականում թուագրւում է ոչ թէ ՈՂԳ (1244), ՈՂԴ (1245) կամ ՁԽԲ (1293), ինչպէս ենթադրել են դրա հրատարակիչները (տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ VI, էջ 203-205), այլ՝ ՁԼԸ (1289):

քերի այդօրինակ թուլացումն ու անձի նուաստացումը հանդուրժել չէր կարող: Նա ճարահատեալ ընտրեց չարիքներից փոքրագոյնը եւ 1290 թ. վերջերին, օգտուելով Վախթանգ Բ.-ին հովանաւորող Արղունի հիւանդանալուց, ձեռնամուխ եղաւ իր այդ ախոյեանին միւսով՝ Դեմետրէ Բ.-ի որդի Դաւթով արեւելվրացական գահին փոխարինելուն[56]: Խուլթլու Բուղայի ջանքերը պսակուեցին յաջողութեամբ, ինչին մեծապէս նպաստեցին Արղունի ու Վախթանգ Բ.-ի մահերը՝ համապատասխանաբար 1291 թ. մարտի 10-ին եւ 1292-ի սկզբին: Արղունին 1291 թ. յուլիսի 23-ին յաջորդած եղբայրը՝ Քէյդաթուն, վրաց արքային հովանաւորելով հանդերձ, սկզբում վստահում ու դրական էր վերաբերւում Խուլթլու Բուղային: Պատահական չէ, որ փոքրասիական Տոնղուզալու ապստամբ քաղաքի դէմ շարժուելուց առաջ Քէյդաթուն նաեւ նրան յանձնարարեց Իլխանութեան սահմանների պաշտպանութիւնը Ոսկէ Հորդայի հնարաւոր յարձակումից[57]:

Ինչպէս եւ պէտք էր սպասել, Դեմետրէ Բ.-ի որդի Դաւթի Ը.-ի՝ 1292 թ. գահ բարձրանալուց շատ չանցած նրա եւ Խուլթլու Բուղայի յարաբերութիւնները սրուեցին: Պատճառը ոչ միայն նոր արքային եւս իր հլու կամակատարի վերածելու եւ նրանից շնորհումներ կորզելու՝ Խուլթլու Բուղայի որդեգրած ուղեգիծն էր, այլեւ իր հօր եղբայրական վախճանում նրա գործուն մասնակցութեանը Դաւթի Ը.-ի քաջատեղեակութիւնը: Դա երեւում է թէկուզ նրանից, որ աթաբեկութեան ու ամիրսպասալարութեան պաշտօններն այդպէս էլ չվերադարձուեցին Խուլթլու Բուղային, որը Գիւրջիստանի վիլայէթի հայ-վրացական աւագանու շարքում դիտւում էր երկրորդը Շահնշահից յետոյ[58]: Նրա հետ հաշիւները մաքրելու համար Դաւիթ Ը.-ն, օգտուելով յարմար պահից, դիմեց Քէյդաթուին եւ հասաւ իր նպատակին: Խուլթլու Բուղան 1293 թ. օգոստոսի սկզբներին մահապատժի ենթարկուեց[59]: Անժառանգ Խուլթլու Բուղայի ամբողջ ունեցուածքը, այդ թւում՝ Դմանիսը, Քէյդաթուի հրամանով յանձնուեց Դաւիթ Ը.-ին եւ ոչ թէ նրա եղբօրը՝ Մանկասարին: Դրանով Մահկանաբերդցիների իշխանական տոհմն արագօրէն հեռացաւ պատմական ասպարէզից:

Քէյդաթուի օրօք, ինչպէս նրա կողմից պետական միջոցների անխնայ ու աննպատակ վատնելու, այնպէս էլ հսկողութեան փաստական չգոյութեան պայմաններում ծաղկող գանձագողութեան հետեւանքով պետական գանձարանը դատարկուեց: Դա յանգեցրեց ֆինանսական ճգնաժամի, որից դուրս գալու համար Քէյդաթուն իր առաջին վէզիր Սադր ադ Դին Զենջանիի խորհրդով ու դրդմամբ 1294 թ. սեպտեմբերին մահուան սպառնալիքով շրջանառութեան մէջ դրեց ոչնչով չապահովագրուած թղթադրամներ: Սակայն, քանի որ այդ թղթադրամների գործածութիւնն աւելի բարդացրեց իրավիճակը՝ յարուցելով բնակչութեան բուռն դժգոհութիւնը, դրանք շատ չանցած հանուեցին շրջանառութիւնից[60]:

1295 թ. մարտին լիովին հեղինակազրկուած Քէյդաթուն սպանուեց: Նրան յաջորդեց հօրեղբայրը՝ Բայդուն, որն իշխեց ընդամէնը վեց ամիս: Իլխանութեան մահմեդական վերնախաւի աջակցութեամբ Բայդուին իշխանազրկելով՝ գահ բարձրացաւ Արղունի աւագ որդի Ղազանը (1295-1304): Նա քաղաքական դրդապատճառնե-

56 Տե՛ս *Картлис цховреба*, с. 392.

57 Տե՛ս նոյն տեղում, էջ 393:

58 Տե՛ս նոյն տեղում:

59 Տե՛ս **Ռ. Յոշեաձզ**, նշ. աշխ., հտ. 1, էջ 194-196. **Рашид ад-Дин**, т. III, с. 137, *Картлис цховреба*, с. 394.

60 Տե՛ս **Рашид ад-Дин**, т. III, с. 135-136. **Ստեփանոս Օրբէլեան**, էջ 46:

© National Library of Armenia

րով ոչ միայն պաշտօնապէս մահմեդականութիւն ընդունեց, այլեւ հալածանքներ սկսեց Իլխանութեան քրիստոնեայ բնակչութեան նկատմամբ: Դրանցում յատկապէս աչքի ընկաւ գլխաւոր էմիր Նովրուզը՝ նախկին բասղաղ Արղունի որդին: Իլխանութեան տարբեր վայրերում քանդուեցին կամ աւերուեցին ու կողոպտուեցին բազմաթիւ եկեղեցիներ, անարգուեցին քահանաներ, կոտորուեցին կամ ունեցուածքից զրկուեցին շատ ու շատ քրիստոնեաներ: Նովրուզի հրոսակները, Սիւնիքի եւ Նախիջեւանի վանքերն ու եկեղեցիները մեծապէս վնասելով ու կողոպտելով հանդերձ, չքանդեցին՝ «ակնածեալ ի Վրաց (հայ-վրացական - Ա. Շ.) զօրացն ... իսկ այլ աշխարհս Հայոց, զոր Երասխայ գետն հատանէ, մնաց շնորհօքն Աստուծոյ»[61]:

Իլխանութեան քրիստոնեայ էթնիկ փոքրամասնութիւնների, մասնաւորապէս՝ հայերի նկատմամբ Նովրուզի մահմեդական մոլեռանդութեամբ զուգորդուող կրօնական հալածանքներին ու բռնութիւններին Ղազանը վերջ տուեց՝ նրան ներկայացած կիլիկեան Հայաստանի թագաւոր Հեթում Բ.-ի միջնորդութիւնից յետոյ՝ 1296 թ.[62]: Ընդ որում, համաձայն Ստեփանոս Օրբէլեանի, Ղազանը Հեթում Բ.-ին «ի չքմեղս եղեալ ասէր. ես ոչ գիտեմ զայդ. այլ Նաւռուզն գործեաց զամենայն. եւ հրամայեաց առ ժամայն գրել հրովարտակ ընդ ամենայն աշխարհ զի մի իշխեսցեն ձեռնարկել յեկեղեցիս եւ ի քրիստոնեայս. այլ խաղաղութեամբ բնակեսցէ ամենայն ոք՝ զիւր հաւատ եւ պաշտօն համարձակ ունելով»[63]:

Սակայն քրիստոնեաների եւ քրիստոնէութեան նկատմամբ Ղազանի դիրքորոշման փոփոխութիւնը պայմանաւորուած էր ոչ թէ Հեթում Բ.-ի միջնորդութեամբ, ինչպէս գտնում են ժամանակի գրեթէ բոլոր հայկական սկզբնաղբիւրները, այլ ուրիշ գործօններով: Նովրուզի գործողութիւններն ուղղորդելով կամ նրան առնուազն չհակազդելով, Հեթում Բ.-ի մօտ չքմեղացած Ղազանը նպատակադիր էր սիրաշահել իրեն յենարան դարձած տեղական մահմեդական վերնախաւին, յատկապէս՝ հոգեւորականութեանը եւ, ինչու չէ, բնակչութեանը: Սակայն, միւս կողմից, նրան Եգիպտոսի մամլուքեան սուլթանութեան դէմ յաջող պայքարելու համար խիստ անհրաժեշտ էր Իլխանութեան քրիստոնեայ տարրի, Կիլիկիայի հայկական պետութեան, պապականութեան եւ Եւրոպայի աջակցութիւնը: Այս ամէնը ժամանակին Հեթում Բ.-ն հրաշալի էր հասկացել[64]: Բացի այդ, Արեւելեան Վրաստանում Նովրուզի գործողութիւնների հետեւանքով անհանգիստ իրավիճակ էր ստեղծուել: Դաւիթ Ը.-ն ոչ միայն ընդվզել էր Ղազան խանի դէմ, այլեւ յամառօրէն փորձում էր ընդդէմ նրա համագործակցել Ոսկէ Հորդայի խան Ղիյաս ադ Դին Թոխթաուի (1290-1312) հետ՝ խոստանալով Իլխանութեան վրայ յարձակուելու դէպքում ճանապարհ տալ նրա զօրքին[65]:

Ահա թէ ինչու Ղազանը վերջ տուեց Նովրուզի բռնարարքներին եւ նրան ուղարկեց Խորասան: Շատ չանցած, մրցակիցների խարդաւանքների հետեւանքով նա մեղադրուեց Ղազանին դաւաճանելու մէջ եւ բռնուելով՝ 1297 թ. օգոստոսին մա-

61 Ստեփանոս Օրբէլեան, էջ 473. տե՛ս նաեւ Հեթում պատմիչ, էջ 60, *Մանր ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ.*, հտ. I, էջ 87, 106, 108, 120, 124, հտ. II, էջ 150, *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար*, էջ 772-773, 784, 810, *Картлис цховреба*, с. 395 եւ այլն:

62 Ստեփանոս Օրբէլեան, էջ 474. *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար*, էջ 773. *Մանր ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ.*, հտ. II, էջ 150:

63 Ստեփանոս Օրբէլեան, էջ 474:

64 Հեթում պատմիչ, էջ 60:

65 *Картлис цховреба*, с. 395-396.

հապատժի ենթարկուեց[66]: Ուշագրաւ է, որ Նովրուզին վնասազերծելու նպատակով ուղարկուած բանակի կազմում էին նաեւ Տարսայիճ Օրբէլեանի եղբայր Իւանէի որդի Լիպարիտը եւ Ամիր Հասան Խաղբակեանի տղայ Էաչին, «որք թուք արձակեալ յերես Նաւռուզին մեծ անարգանօք ձաղէին»[67]: Այս բանակի հրամանատարն էր Նովրուզի մրցակից զօրավար Խութլուշահը, որը ժամանակի հայկական սկզբնաղբիւրներում հասկանալի պատճառներով խիստ դրական է գնահատուած: Դրանից յետոյ Ղազան խանը Դաւիթ Ը.-ին հնազանդեցնելու նպատակով նրա դէմ ուղարկեց Նովրուզից յետոյ գլխաւոր էմիր դարձած Խութլուշահին, որին միացան աթաբեկ ու ամիրսպասալար Շահնշահը եւ վրացի ու հայ շատ իշխաններ[68]: Խութլուշահը 1297 թ. վերջին եւ յաջորդ տարուայ գարնանը խաղաղ կամ բռնի միջոցներով փորձեց Դաւիթ Ը.-ին դարձի բերել, բայց արդիւնքի չհասաւ: Հէնց դա է նկատի ունեցել Գիւրջիստանի վիլայէթը եւ Վրաստանը յստակ տարբերակող Ռաշիդ ադ Դինը՝ փաստելով, որ Վրաստանը չի ընդունում Ղազան խանի իշխանութիւնը[69]: Խութլուշահը Դաւիթ Ը.-ի դէմ ծաւալած ռազմական գործողութիւնների ընթացքում աւերեց արեւելավրացական շատ գաւառներ, ինչպէս նաեւ՝ հայկական ու հայաբնակ Սոմխիթը, որի համար արժանացաւ Ղազան խանի յանդիմանութեանը[70]:

Տեսնելով, որ չի յաջողւում հնազանդեցնել Դաւիթ Ը.-ին՝ Ղազան խանն արեւելավրացական գահը յանձնեց նրա կրտսեր եղբայր Վախթանգին: Երբ Վախթանգը Խութլուշահի հետ նրա գլխաւորած զօրքով Ղազան խանի մօտից վերադարձաւ Տփխիս, նրան յարեցին մի շարք իշխաններ, այդ թւում՝ Թմոգուեցիները եւ աթաբեկ ու ամիրսպասալար Շահնշահը[71]: Սակայն իրականում Վախթանգի իշխանութիւնը տարածւում էր միայն Տփխիսի, Սոմխիթի, Դմանիսի ու Սամշուիլդէի, այսինքն՝ հիմնականում հայկական գաւառների վրայ, իսկ մնացածները շարունակում էին ենթարկուել Դաւիթ Ը.-ին[72]:

Ասորիքն ու Պաղեստինը գրաւելու եւ Կիլիկիայի հայկական թագաւորութեան նկատմամբ իր դաշնակցային պարտաւորութիւնները կատարելու նպատակով Ղազան խանը երեք արշաւանք (1299, 1300, 1303) կազմակերպեց Եգիպտոսի մամլուքեան սուլթանութեան դէմ: Դրանց մասնակցում էին նաեւ Կիլիկիայի հայկական թագաւորութեան զօրքերը Հեթում Բ.-ի ու Գիւրջիստանի վիլայէթի հայ-վրացական զօրամասերը՝ Վախթանգ Ը.-ի եւ աթաբեկ ու ամիրսպասալար Շահնշահի գլխաւորութեամբ: Սակայն մոնղոլական եւ հայ-վրացական միացեալ ուժերը չկարողացան զարգացնել սկզբնական յաջողութիւնները եւ ստիպուած էին ծանր կորուստներով յետ քաշուել[73]:

Իլխանութեան խիստ ծանր տնտեսական ու ֆինանսական վիճակը շտկելու եւ պետութեան կառավարումը բարելաւելու անհրաժեշտութիւնը Ղազան խանին ստիպեցին իր գահակալութեան վերջին տարիներին կատարել մի շարք բարեփոխումներ: Դրանք ընդգրկում էին պետութեան կեանքի հիմնական բնագաւառները: Ճիշտ է, այդ բարեփոխումները պետական գանձարանի հասոյթները մէկ քառորդով աւե-

66 **Рашид ад-Дин**, т. III, с. 170-177. Ստեփանոս Օրբէլեան, էջ 475:

67 Ստեփանոս Օրբէլեան, էջ 475

68 *Картлис цховреба*, с. 396-399.

69 **Рашид ад-Дин**, т. III, с. 271.

70 Նոյն տեղում, էջ 179:

71 *Картлис цховреба*, с. 398.

72 Նոյն տեղում, էջ 39:

73 Նոյն տեղում, էջ 401-403. **Рашид ад-Дин**, т. III, с. 182-188, 191-196. Հեթում պատմիչ, էջ 66. Սամուէլ Անեցի, էջ 164. *Մանր ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ.*, հտ. II, էջ 151:

© National Library of Armenia

լացրին, սակայն հեռու էին բաւարար լինելուց եւ սոսկ առժամանակ դադարեցրին Իլխանութեան տնտեսական քայքայման ու անկման գործընթացը, որը վերսկսուեց 1304 թ. Ղազան խանի մահուանից յետոյ: Իլխանութեան քրիստոնեայ ժողովուրդների, այդ թւում՝ հայերի, տնտեսական վիճակը ոչ միայն չբարելաւուեց, այլեւ Ղազան խանը պետական գանձարանը համալրելու նպատակով անգամ ոչ մահմեդականներից գանձուող ջիզեա կոչուող հարկը վերականգնելու անյաջող փորձ կատարեց: Ինչ վերաբերում է հայկական իշխանութիւններին, ապա դրանց մասնատումը եւ տնտեսական ու ռազմաքաղաքական կարողութիւնների նուազումն աւելի ու աւելի էր զգացւում:

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՃԱՐԸ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Հայկ Յակոբեան

Շնորհիւ հին եւ միջնադարեան Հայաստանի խոր ժառանգականութեան հայ վաղմիջնադարեան մշակոյթը կարեւոր աղբիւրագիտական արժէք ունի հին Հայաստանի պատմութեան տարբեր հարցերը լուսաբանելու համար: Միաժամանակ, Հայաստանի մշակոյթն ամուր յենուած է եղել Հին Արեւելքի գաղափարախօսական հիմքի վրայ, միջնադարեան Հայաստանում այն կիրառուել է որպէս փորձուած ուղեցոյց՝ Մերձաւոր Արեւելքում ի յայտ եկած նոր իրողութիւնները համարժէք ընկալելու եւ զարգացման նոր միտումներում ճիշտ կողմնորոշուելու համար: Ստորեւ քննարկուելու է անտիկ դարաշրջանի Հայաստանի տաճարների մի ուրոյն տիպ[1], որի արձագանքները, ինչպէս կը տեսնենք, պահպանուել են միջնադարեան պատկերագրութեան մէջ: Դիտարկման ներկայացուող միջնադարեան մանրանկարը, որը գիտական շրջանառութեան մէջ է դրուել նշանաւոր հայագէտ Հ. Ղեւոնդ Ալիշանի կողմից[2], այժմ պահւում է Վատիկանում եւ զետեղուած է եղել բիւզանդական հայազգի կայսր Բարսեղ Բ.-ին պատկանող Մենոլոգիայում: Ժ. դարի այս մանրանկարի վրայ պատկերուած է Գրիգոր Լուսաւորիչը: Նրա գլուխը լուսապսակի մէջ է, նա եպիսկոպոսական հանդերձանքով է, կանգնած ինչ-որ մոնումենտալ շէնքի առջեւ: Ըստ Ղ. Ալիշանի՝ մանրանկարի վրայ պատկերուած է Լուսաւորիչը Մեծ Հայքի թագաւոր Տրդատ Գ.-ի արքունիքում, որտեղ կարդում է իր քարոզներից մէկը: Եզակի պատմական արժէք ունի շէնքը, որի առջեւ կանգնած է Լուսաւորիչը (աղ. I, նկ. 1): Արեւելագէտ Կ. Տրեւերի կարծիքով՝ յետին պլանում, հաւանաբար, պատկերուած է հին հայկական պանթէոնի գերագոյն աստուածներից մէկի՝ Միհրի տաճարը, եւ երեւի այս հայ հեթանոսական աստուածութեան դէմ էլ տուեալ դրուագում ուղղուած էր Լուսաւորչի քարոզը: Յայտնի է, որ վաղ միջնադարում ծաւալուող գաղափարական պայքարում Միհրի պաշտամունքի դէմ ուղղուած գործերով էին հանդէս գալիս հայ փիլիսոփայ Եզնիկ Կողբացին եւ պատմիչ Եղիշէն[3]:

Լուսաւորչի եւ մեհեանի պատկերը շրջանառութեան մէջ դրած վերոյիշեալ գիտականները պարզ պատճառներով «Միհրի տաճարը» չեն ենթարկել աւելի մանրամասն վերլուծութեան՝ տրամադրութեան տակ չունենալով որեւէ տեղական հնագիտական զուգահեռ: Դեռեւս մեզանից երեք տասնամեակ առաջ յայտնի կամ աւելի ճիշտ՝ հասու չէր անտիկ Հայաստանի որեւէ պաշտամունքային շէնք, բացառութեամբ Գառնիի տաճարի: Նշանաւոր գիտնական Գ. Ա. Տիրացեանը գրում էր հետեւեալը. «Թէեւ Արմաւիրի պեղումները շարունակւում են արդէն 20 տարի, այս-

1 Նախկինում արդէն ներկայացրել ենք հին Հայաստանի սիւնազարդ դահլիճներին նուիրուած մի աշխատանք. տե՛ս Հայկ Յակոբեան, *Հին Հայաստանի սիւնազարդ դահլիճները եւ Հողմիկի տաճարական համալիրը*,- Հին Հայաստանի պատմութեան եւ մշակոյթի հարցեր, Գէորգ Տիրացեանի յիշատակին նուիրուած գիտաժողովի զեկուցումներ, Երեւան, 2001, էջ 49-56:

2 Հ. Ղ. Ալիշան, *Այրարատ*, Վենետիկ, 1890, նկ.՝ 440-րդ էջին կից:

3 Եզնիկ Կողբացի, *Եղծ աղանդոց*, Թիֆլիս, 1912. Եղիշէի *Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին*, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեանի, Երեւան, 1957. **К. В. Тревер**, *Очерки по истории культуры древней Армении (II в. До н.э. – I в. н.э.)*, М.-Л., 1953, с. 65:

© National Library of Armenia